«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի փաթեթ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 1-ին և 3-րդ պարբերություններում «Իրավական ակտերի մասին» բառերը փոխարինել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» բառերով.

2) 4-րդ մասում «Երևան քաղաքի (այսուհետ՝ Երևան), Գյումրի քաղաքի (այսուհետ՝ Գյումրի), Վանաձոր քաղաքի (այսուհետ՝ Վանաձոր)» բառերը փոխարինել «ինչպես նաև համայնքների» բառերով:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասում «առաջ և 5 օր» բառերը փոխարինել «(իսկ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ 26 օր) առաջ և 7 օր» բառերով.

2) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտը յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը լիազոր մարմնին է տրամադրում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված անձանց ամբողջական ցանկը:&ra